

Արձանագրություն №5/2012-2013

<<Երևանի պետական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության
գիտական խորհրդի՝ 2013թ. մարտի 28-ին տեղի ունեցած թիվ 5 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 64-ը (վաթսունչորս):
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի
առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ԵՊՀ գիտական խորհրդի 2012-13 ուստարվա 2-րդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի
հաստատում: (Ձեկ.՝ գիտքարտուղար Մ. Ա. Սողոմոնյան)
2. 2013/14 ուստարվա հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի
ընդունելության մասնագիտությունների ցանկի հաստատում: (Ձեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ.
Գրիգորյան)
3. Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման
կրթագիտական ծրագրի իրականացման արդյունքների մասին (2012/2013 ուստարվա 1-ին
կիսամյակ) (Ձեկ.՝ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետ Ժ. Ա. Աղասյան)
4. 2012/13 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստոցող ուսանողների
ցուցակի հաստատում (զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան)
5. Գիտական զեկուցում. <<Նարեկացիագիտական դիտարկումներ>>: (զեկ.՝ փիլիսոփայության
պատմության ամբիոնի պրոֆեսոր, փ.գ.դ. Հ. Ղ. Միրզոյան)
6. Ընթացիկ հարցեր
 - 6.1 ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում <Ցեղասպանագիտություն>
մագիստրոսական ծրագիր կազմակերպելու մասին:
 - 6.2 Անալիտիկ քիմիայի ամբիոնը Անօրգանական քիմիայի ամբիոնին միավորելու և նոր
կազմավորված ամբիոնը <Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն> անվանակոչելու
մասին:
 - 6.3 ԵՊՀ <Գենդերային և առաջնորդության ուսումնասիրությունների կենտրոն> ստեղծելու
մասին:
 - 6.4 Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսումնամեթոդական լաբորատորիան
Մեյրան Ամիրյանի անվամբ անվանակոչելու մասին:
 - 6.5 ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնին կից գործող
Հնագիտության լաբորատորիան լուծարելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և
մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.** - ԵՊՀ գիտական խորհրդի 2012-13 ուստարվա 2-րդ կիսամյակի նիստերի ժամանակացույցի մասին: Գիտքարտուղար Ս. Սողոմոնյանը ներկայացրեց ժամանակացույցի նախագիծը:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Միմոնյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը:

Որոշեցին. – Հաստատել ժամանակացույցը:

2. **Լսեցին.** - 2013/14 ուստարվա հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության մասնագիտությունների ցանկերի հաստատման մասին: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը ներկայացրեց մասնագիտությունների ցանկերը՝ մատնանշելով կատարված փոփոխությունը, որ վերաբերում էր մագիստրատուրայի ցանկում քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտ. փոխարեն աշխարհագրություն մասնագիտության ընդգրկմանը:

Արտահայտվեցին. – հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչ Յ. Մովսիսյանը:

Որոշեցին. – հաստատել 2013/14 ուստարվա հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության մասնագիտությունների ցանկերը:

3. **Լսեցին.** - Հաղորդում ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի իրականացման արդյունքների մասին (2012/2013 ուստարվա 1-ին կիսամյակ): Լրացուցիչ հետբուհական վարչության պետ Ժ. Աղայանը ներկայացրեց ունկնդիրների թիվն ըստ մոդուլների, անգլերենի, տեղեկատվական տեխնոլոգիաների, մանկավարժական-հոգեբանական պատրաստության, մասնագիտական պատրաստության մոդուլների ունկնդիրների բաշխվածությունն ըստ ֆակուլտետների և ըստ վաստակած միավորների, ինչպես նաև ծրագրի արդյունքներն ըստ կառուցամասերի:

Արտահայտվեցին. – Արտահայտվողներ չեղան:

Որոշեցին. – Ժ. Աղայանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին.** - 2012/13 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստոցոդ ուսանողների ցուցակի հաստատման մասին: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը ներկայացրեց ցուցակը, որ նախապես ուղարկված էր եղել գիտխորհրդի անդամներին:

Արտահայտվեցին. – արտահայտվողներ չեղան:

Որոշեցին. – Հաստատել 2012/13 ուստարվա 2-րդ կիսամյակի անվանական կրթաթոշակ ստոցոդ ուսանողների ցուցակը:

5. **Լսեցին.** – Նարեկացիագիտական դիտարկումներ: Փ.Գ.Դ., պրոֆեսոր Հ. Միրզոյանը անդրադարձավ նարեկացիագիտության ներկայիս վիճակին, առկա բաց, ուսումնասիրության կարոտ մասերին: Հ. Միրզոյանի դիտարկումները վերաբերում էին Նարեկացու <Մատեան ոբերգութեան> ստեղծագործության վերնագրին, այդ և մյուս ստեղծագործություններում առկա պատկերային տարբերություններին, Նարեկացու կողմից օգտագործված մի շարք ծածկագրերի բացատրություններին՝ դրանում վերհանելով մեծ բանաստեղծի կյանքի ողբերգական դեպքերը: Անդրադարձ կատարվեց նաև Նարեկացու՝ իր կյանքի ավարտից հետո շուրջ 170 տարի չհիշատակվելու պատճառներին:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Միմոնյանը, իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ. Գրիգորյանը,

ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը, հայ գրականության ամբիոնի վարիչ Ս. Մուրադյանը, ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն. Մարտիրոսյանը:

Որոշեցին. – ընդունել ի գիտություն և շարունակել գիտական զեկուցումների պրակտիկան:

6. Լսեցին. – ընթացիկ հարցեր:

6.1 Լսեցին. – ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում

<Ցեղասպանագիտություն> մագիստրոսական ծրագիր կազմակերպելու մասին: Ռեկտոր Ա. Սիմոնյանը ծրագրի կազմակերպման հարցում մատնանշեց ցեղասպանագիտության գիտակարգը խորությամբ ուսումնասիրելու անհրաժեշտությունը հայերի և այլ ժողովուրդների ցեղասպանությունների տարբեր ասպեկտների շուրջ ծանրակշիռ հետազոտություններ իրականացնելու տեսանկյունից:

Արտահայտվեցին. – Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը, տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ Է. Չուբարյանը, Հայոց լեզվի ամբիոնի վարիչ Լ. Եզեկյանը, ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն. Մարտիրոսյանը, իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը:

Որոշեցին. – Երևանի պետական համալսարանի հայագիտական հետազոտությունների ինստիտուտում կազմակերպել <Ցեղասպանագիտություն> մագիստրոսական ծրագիր:

6.2 Լսեցին. – Անալիտիկ քիմիայի ամբիոնը Անօրգանական քիմիայի ամբիոնին միավորելու և նոր կազմավորված ամբիոնը <Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն> անվանակոչելու մասին: Հաշվի առնելով ԵՊՀ անալիտիկ քիմիայի ամբիոնում հաստիքների սակավությունը, դրա արդյունքում ամբիոնի բնականոն գործունեությանն առնչվող բարդությունները՝

Որոշեցին. –

1. Երևանի պետական համալսարանի անալիտիկ քիմիայի ամբիոնը միացնել անօրգանական քիմիայի ամբիոնին:
2. Նոր կազմավորված ամբիոնն անվանակոչել <Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոն>:

6.3 Լսեցին. – ԵՊՀ <Գենդերային և առաջնորդության ուսումնասիրությունների կենտրոն> ստեղծելու մասին: Հաշվի առնելով գիտական հանրությունում գենդերային և առաջնորդության թեմատիկայի գծով գիտական հետազոտությունների աճի միտումները, միջազգային հանրության հետաքրքրությունների ընդլայնումն այս ոլորտում՝

Որոշեցին. – Ստեղծել Երևանի պետական համալսարանի գենդերային և առաջնորդության ուսումնասիրությունների կենտրոն:

6.4 Լսեցին. – Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսումնամեթոդական լաբորատորիան Սեյրան Ամիրյանի անվամբ անվանակոչելու մասին: Հաշվի առնելով 2012թ. կյանքից վաղաժամ հեռացած ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայի վարիչ, դոցենտ Սեյրան Ամիրյանի գիտամանկավարժական բեղմնավոր գործունեությունը,

նրա կարևոր ներդրումը Համալսարանում հոգեբանության բաժնի ստեղծման և կայացման գործում, նպաստը հասարակության լայն շերտերում հոգեբանական գիտելիքի տարածմանը՝
Որոշեցին. - Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ուսումնական լաբորատորիան անվանակոչել դոցենտ Սեյրան Սմբատի Ամիրյանի անվամբ:

6.5 Լսեցին. - ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնին կից գործող Հնագիտության լաբորատորիան լուծարելու մասին: Հաշվի առնելով ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում հնագիտական հետազոտությունների լաբորատորիայի՝ պետական բազային ֆինանսավորմամբ գործելու պարագայում ԵՊՀ պատմության ֆակուլտետում համալսարանի ֆինանսավորմամբ հնագիտության լաբորատորիայի գործունեության աննպատակահարմարությունը՝

Որոշեցին. - Լուծարել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի հնագիտության և ազգագրության ամբիոնին կից գործող հնագիտության լաբորատորիան:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

04.04.2013թ.